ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԳԵԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ

ՍԱՄՎԵԼ ՊԱՐԶՅԱՆ

Երևանի պետական բժշկական համալսարան, ՀՀ, Երևան

Էլ. հասցե՝ *samvelparzyan.sp@gmail.com*

DOI: 10.24234/scientific.v1i51.301

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել զինվորական անձնակազմի հոգեկան կայունության վրա ազդող հիմնական դրդապատճառները, ինչպես նաև բացահայտել և վերլուծել հոգեկան կայունության ապահովման հիմնախնդիրները: Խորքային և համակողմանի հետազոտության անհրաժեշտությունը պայմանավորված է ժամանակակից պատերազմների ինտենսիվությամբ, կիրառվող զինատեսակների բազմազանությամբ, որոշումների ընդունման համար սահմանափակ ժամանակով, արագ փոփոխվող իրադարձություններով և «պատերազմի մշուշով» պայմանավորված անորոշ իրավիճակներով: Այս պայմաններում զինվորականների հոգեկան կայունության պահպանումը դառնում է մարտունակության և արդյունավետ գործողությունների կարևոր նախապայման:

Բանալի բառեր՝ *հոգեկան կայունություն, զինվորականներ, բարոյահոգեբանական վիճակ, արտակարգ իրավիճակ:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի զինված ուժերի զարգացման ներկայիս փուլը բնութագրվում է ռազմական գործողություններում մարդկային հուսալի և արդյունավետ գործունեության խնդրի նկատմամբ ուշադրության զգալի աճով: Զինծառայողների բարոյահոգեբանական վիճակի և հոգեկան կայունության ամրապնդմամբ բարձրացվում է նրանց մարտական պատրաստվածությունը և առաջադրանք կատարելու ունակությունը: Զինված ուժերի մարտունակության կարևոր բաղադրիչ է հանդիսանում զինծառայողների բարձր բարոյահոգեբանական վիճակը՝ բնավորություն, խառնվածք, մասնագիտական կարողություններ, առաջնորդություն, կամք, արիություն և այլն:

Հայտնի է, որ բարձր հոգեբանական պատրաստվածությանը կարող է պարտությունը վերածել հաղթանակի և ապահովել հետագա հաջողությունները մարտի դաշտում: «Բանակը պարտված չէ, քանի դեռ այն չի տոգորված պարտության

գիտակցությամբ, քանի որ պարտությունը մտքի եզրակացություն է, այլ ոչ թե ֆիզիկական վիճակ» (Коупленд, 1991)։ «Պատերազմների և ռազմական արվեստի պատմությունը մեզ համոզում է, որ երբ պայքարը ձգձգվում է, դրա արդյունքը որոշվում է բարոյական, այլ ոչ թե ֆիզիկական ուժով» (Коупленд, 1991)։

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածում կիրառվել են մեթոդաբանության մեջ ընդունված հայտնի սկզբունքները(դետերմիզմի, օրինաչափ զարգացումների, փաստարկումների, պատճառահետևանքային) սկզբունքները և որպես կոնկրետ մեթոդներ դիտարկվել են մասնագիտական գրականության վերլուծության և սույն հետազոտություններում քննարկվող մասնագիտական դիտարկումների համեմատման մեթոդը, տարբեր երկրների զինված ուժերի ռազմական փորձի թարմացման մեթոդները։

Զինվորական ծառայությունը իր էությամբ գործունեության բնագավառ է, որոշակի սահմանափակումներով՝ սովորական կենսապայմանների բացակայություն,(վարքի հատուկ կանոնակարգվածություն, շփման սահմանափակ շրջանակ)։

Իր բովանդակությամբ զինվորական գործունեությունը բաժանվում է երկու մասի՝ մարտական և ուսումնամարտական։ Մարտական գործունեությունը ծավալվում է ռազմական բախումների, ճակատամարտերի, զինված հակամարտությունների և հակատեռորիստական օպերացիաների պայմաններում։ Ուսումնամարտական գործունեության նպատակը զինվորական մասնագետների պատրաստումն է, որն իր մեջ ընդգրկում է՝ առօրյա ծառայողական պարտականություններ, մարտական պատրաստություն, զինվորական վարժանքներ, որոնք նպաստում են զինծառայողների նախապատրաստմանը հնարավոր մարտական գործողությունների և տարաբնույթ արտակարգ իրավիճակներում գործելու ունակությունների ձեռքբերմանը։

Զինվորականների գործունեությունը իրականացվում է տարբեր պայմաններում՝ իրավիճակային (մարտի կամ ուսումնական դաշտում՝ ռազմական տարբեր տեխնիկա և սպառազինություն շահագործելիս), ժամանակային (օրվա ցանկացած ժամի), աշխարհագրական (լեռներում, հարթավայրերում, անտառներում և այլն), կլիմայական և այլ միջավայրերում։ Զինվորական գործունեությունը համեմատած այլ գործունեության տեսակների հետ ավելի լարված և ծայրահեղ բնույթ ունի, այն բնութագրվում է իրադարձությունների անակնկալությամբ, հանկարծակիությամբ, անսովորությամբ, որոնք ուղեկցվում են բացասական հուզական վիճակներով, որից էլ կարող է խաթարվել հոգեկան կայունությունը (Караяни, Сыромятников, 2016)։

Հոգեկան կայունության ուսումնասիրության խնդիրը կարևոր է և արդիական՝ հատկապես արտակարգ իրավիճակներում գործող անձնակազմների համար: Հոգեբանության գիտական գրականության մեջ այս հայեցակարգը վերլուծում են անհատականության հատկությունների համալիրում, ինչպիսիք են՝ դիմադրությունը, հավասարակշռությունը, կենսունակությունը, կայունությունը և այլն (Леонтьев, Рассказова, 2011):

Հոգեկան կայունության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հոգեկան կայունությունը պայմանավորված է անձնական առանձնահատկություններով՝ խառնվածքով, որն ազդում է անձի անհատական վարքի դրսևորումներ վրա, ինչպես նաև այն կապում են նյարդային համակարգի հատկությունների հետ: Է.Բոժովիչը առաջարկել է հոգեկան կայունությունը դիտարկել «որպես անհատի ձևավորման կենսամակարդակ, արտաքին ազդեցությունների նկատմամբ որոշակի անձեռնամխելիություն ունենալու ունակություն» (Божович, 2001):

Հոգեկան կայունությունը միջդիսցիպլինար հետազոտությունների առարկա է, քանի որ այն միաժամանակ ընդգրկում է մարդու հոգեբանական, ֆիզիոլոգիական և նյարդաբանական առանձնահատկությունները: Յուրաքանչյուր գիտակարգ ուսումնասիրում է այս երևույթի մի կողմը՝ անձնային գծերից մինչև օրգանիզմի կենսաբանական հարմարվողականությունը: Նման համակողմանի մոտեցումը թույլ է տալիս հոգեկան կայունությունը դիտարկել որպես ամբողջական համակարգ, որն ապահովում է անհատի արդյունավետ գործունեությունը սթրեսային պայմաններում:

Նշենք, որ հոգեկան կայունության տեսությունն արդիական է զինվորական մասնագիտական գործունեության ընթացքում, քանզի զինվորական ծառայությունը ուղեկցվում է արտահայտված հոգեկան և ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ: Հոգեկան կայունությունը ինքնին որոշում է մարդու ընդհանուր հուզական, կամային, ֆիզիկական և ֆիզիոլոգիական որակները:

Միջավայրի անբարենպաստ պայմանները կապված են տարբեր գործոնների հետ՝ գեոֆիզիկական, հոգեֆիզիոլոգիական, սոցիալական և այլն, որոնցից յուրաքանչյուրն ուղղակի անդրադառնում է մարդու հոգեկան համակարգի վրա: Այս տեսանկյունից անձնակազմի հոգեկան կայունության ձևավորումը սթրես գործոնների նկատմամբ հանդիսանում է ՀՀ զինված ուժերի կարևորագույն նպատակներից մեկը:

Մտավոր զարգացվածության հետ զուգահեռ՝ մասնագիտական բարձր ունակությունների, բազմակողմանի ֆիզիկական պատրաստվածության հետ մեկտեղ, զինծառայողը պետք է ունենա բարձր հոգեկան կայունության մակարդակ, որպեսզի լիարժեք կատարի իր առջև դրված առաջադրանքները, ներառյալ արտակարգ (ճգնաժամային) իրավիճակներում:

Հոգեբանական կայունությունը դրսևորվում է մարդու առողջության և վարքի բնութագրերում, որոնք ուղղակի կապված են տարբեր պայմաններում անձնակազմի հարմարվողական հնարավորությունների հետ:

Յուրաքանչյուր անձ ունի իր ուրույն անբարենպաստ ազդեցությունների նկատմամբ դիմադրության անհատական հնարավորությունները, որոնց անտեսման դեպքում կարող է առաջանալ «հոգեկան խափանում», ինչը արտահայտվում է լարվածության տարբեր ուժգնությամբ, տևողությամբ և ախտանիշների բնույթով:

Տ.Բերգը ձևակերպել է զինծառայողների «նյարդահոգեբանական անկայունության» հավաքական սահմանումը, որպես «Հոգեկան վիճակների համալիր, որը հոգեֆիզիկական գերծանրաբեռնվածության պայմաններում դրսևորվում է որպես հակում դեպի հոգեբանական անկայունության» (Берг, 2005):

Ըստ Ա.Կարայանի և Ի.Սիրոմյատնիկովի նյարդահոգեբանական անկայունության պատճառի որոշիչ դերը վերագրվում է «նյարդային համակարգի կենսաբանական անլիարժեքությանը, ինչպես բնածին, այնպես էլ ձեռք բերովի հատկանիշներին» (Караяни, Сыромятников, 2006):

Բացի նյարդային համակարգի ֆունկցիոնալ անկարողությունները, հոգեկան անկայունությունը կարող է պայմանավորված լինել բացասական հոգեբանական և սոցիալական գործոններով:

Արտակարգ իրավիճակներում զինծառայողների գործունեության հոգեբանական կայունության դրսեվորման դրդապատճառները

Սթրեսային իրավիճակներում մարդու հոգեկան համակարգը երբեմն արձագանքում է ի, որոնք դժվար է պլանավորել և կանխատեսել: Այնուամենայնիվ, ընկնելով արտակարգ իրավիճակի մեջ (բարդ, ծայրահեղ, անկազմակերպ), մի շարք մասնագիտությունների ներկայացուցիչներ (զինվորականներ, ՆԳՆ աշխատակիցներ, բժիշկներ, փրկարարական ծառայության աշխատակիցներ և այլն) անհրաժեշտորեն պետք է իրականացնեն իրենց վրա դրված պարտականությունները:

Ինչպես նշում է Ա.Կիսելյովը, արտակարգ իրավիճակներում աշխատող մասնագետների (փրկարար ծառայության աշխատակիցներ, ՆԳՆ աշխատակիցներ, զինվորականներ, բժիշկներ և այլն) մասնագիտական գործունեության ընթացքում հաճախ առաջանում են հոգեբանորեն բարդ իրավիճակներ, որոնք բնորոշ են նշված ոլորտներին (Киселев, 2023):

«Արտակարգ իրավիճակները հագեցած են վտանգի, ռիսկի, սպառնալիքի բազմաբնույթ գործոններով, որոնք դրանցում գործող մարդկանց լիարժեք ինքնադրսևորման, կյանքի կենսագործունեության համար անբարենպաստ պայմաններ են ստեղծում» (Մկրտումյան, 2021): Այդ ընթացքում, գործունեության

արդյունավետությունն ապահովող համակարգերը ենթարկվում են լարվածության, առանձին դեպքերում՝ ֆունկցիոնալ արգելակման: Գործունեության բարդ պայմանները կարող են կապված լինել սթրեսի, հիասթափության, կոնֆլիկտի և հոգեբանական ճգնաժամի հետ:

Արտակարգ իրավիճակներում կարող են առաջանալ՝ կյանքին և առողջությանը ուղղված սպառնալիքներ, ժամանակի սղություն, իրավիճակի հաճախակի փոփոխություն, ինչպես նաև բարձր ֆիզիկական ծանրաբեռնվածություն: Այնուամենայնիվ, լավ ֆիզիկական և հոգեբանական պատրաստվածությունը հիմք է հանդիսանում ուժերի հաջող համախմբմանը և տևական ժամանակահատված պահում է անձի հնարավորություններ, աշխատանքային վիճակում:

Արտաքին պայմանների անսպասելիորեն փոխվելու դեպքում մեծ է հուզական ռեակցիաների դրսևորման հավանականությունը: Նման իրավիճակում զինծառայողի հոգեկան համակարգում առաջանում է հուզական խառնաշփոթ և տեղի ունեցող գործընթացների ընկալման աղճատվածություն: Բացի այդ, շատ մարդիկ արտակարգ իրավիճակներում դրսևորում են մտավոր գործունեության արգելակում և գործում են իներցիայով, արագ որոշումներ կայացնելու ու առաջադրանքին համապատասխան գործելու անկարողությամբ:

Զինծառայողի մոտ կարող է նկատվել նաև գործընթացների (ուշադրության, մտածողության, հիշողության, երևակայության, անձի հուզական և կամային ոլորտի գործառնական տեղաշարժեր) այդ թվում նաև զինվորական ծառայության պահանջներին անհարիր բացասական փոփոխություններ (կանոնակարգային խախտումներ, զինվորական ծառայության մեջ ձեռք բերված փորձը կիրառելու անկարողություն և այլն):

Արտակարգ իրավիճակներում նպատակներին հասնելու դժվարությունները՝ ծառայողական և մարտական խնդիրները լուծելու պայմանների և մեթոդների բարդությունը, անդրադառնում են զինվորականների մտավոր գործունեության արդյունավետության, ինչպես նաև, անձի անհատական առանձնահատկությունների վրա: Նրանց միտքն ու կամքը ենթարկվում են հոգեբանական լուրջ փորձությունների:

Հաշվի առնելով արտակարգ իրավիճակների բարդությունը, դրանց դինամիկ բնույթն ու տեղեկությունների անբավարարությունը զինվորականի համար անհրաժեշտություն է առաջանում գործադրելու հսկայական ջանքեր՝ զարգացած վերլուծական միտք, իրավիճակի գնահատում, առաջնայինը երկրորդականից տարբերակելու ունակություն: Արտակարգ իրավիճակներում զինծառայողի մտավոր գործունեությունը տեղի է ունենում ծայրահեղ լարվածության, հուզմունքի, հոգնածության, անհանգստության և պատասխանատվության պայմաններում:

Մինչդեռ, հենց այս պայմաններում է, որ նրա միտքը պետք է գործի առավել արդյունավետությամբ:

Մարտական գործողություններում հիմնական նպատակին հասնելուց՝ թշնամու ուժերի և միջոցների ոչնչացումից բացի, զինվորների համար կենսականորեն կարևոր է առողջության և կյանքի պահպանումը, մարտական գործողությունները անվերապահ շարունակելու կարողունակությունը: Մարտական իրադրությունում դրսևորվում են զինծառայողների լավագույն անձնական որակները՝ քաջություն, հերոսություն, դիմացկունություն և ինքնատիրապետում: Մարտական գործողություններում ոչ պակաս կարևոր գործոն է ծառայակիցներին և ընկերներին օգնություն և աջակցություն ցուցաբերելու պատրաստակամությունը:

Զինվորականների հոգեբանական կայունության դրսևորման վերլուծություն, քննարկում

Աշխարհում տեղի ունեցող ռազմաքաղաքական փոփոխությունները, Եվրոպական մի շարք երկրներում զինված ուժերի համալրման պարտադիր զորակոչի անցման հիմնախնդիրների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ զինվորականների հոգեբանական կայունությունը հանդիսանում է ռազմական բնագավառի կարևորագույն, առանցքային ուղղություններից մեկը:

Հոգեբանական դիմադրողականության հիմնախնդրի վերաբերյալ բաց հրապարակումները և հասանելի վիճակագրությունը համոզիչ կերպով ապացուցում են զինծառայողների շրջանում դրա ձևավորման և պահպանման անհրաժեշտությունը: Օրինակ՝ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ԱՄՆ բանակում գրեթե 100,000 զինծառայողներ տառապել են հոգեկան գերծանրաբեռնվածությունից և մարտական սթրեսից, իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ՝ 1 միլիոն մարդ: Կորեական պատերազմի ժամանակ Ամերիկյան զորքերի անդառնալի հոգեբանական կորուստները կազմել են 4 մարդ, իսկ Վիետնամում՝ 7 մարդ յուրաքանչյուր 1000 զինծառայողի համար: Իսրայելի և Լիբանանի միջև պատերազմի ժամանակ իսրայելցի զինվորների և սպաների 9%-ը զորացրվել է ծառայությունից՝ հոգեբանական անկայունության և մարտական ակտիվության կորստի պատճառով: Իրաք—Քուվեյթ հակամարտության ժամանակ ամերիկյան ավիացիայի կողմից առաջին երեք օրվա ընթացքում հասցված զանգվածային մարտական հարվածներից հետո իրաքցի զինծառայողների ընդհանուր հոգեբանական կորուստները կանոնավոր բանակում կազմել են 45%, իսկ աշխարհազորայինների շրջանում՝ 68-70%: Ռազմական հոգեբան-գիտնականների կարծիքով՝ զինծառայողների բավարար հոգեբանական կայունության և մտավոր ինքնակարգավորման տեխնիկայի և մեթոդների տիրապետման դեպքում, տուժածների կեսից ավելին կարող են վերադառնալ

ծառայության 1-3 օրվա ընթացքում: Ամերիկացի հոգեբանները կանխատեսում են, որ ժամանակակից պատերազմում բոլոր կորուստների մինչև 50%-ը կարող է հոգեբանական լինել (Кокун, et al., 2022):

Ինչպես ցույց է տալիս Իրաք և Աֆղանստան գործուղված զինծառայողների շրջանում կատարված հետազոտությունը, հոգեբանական կորուստը երկարատև ժամանակում կարող է հասնել միչև 30% (Hoge, et al., 2004):

21-րդ դարի սկզբին Իրաքում և Աֆղանստանում տեղի ունեցած մարտական գործողությունները ցույց են տվել, թե ինչպիսի հետևանքներ կարող են ունենալ հոգեկան վնասվածքային իրադարձությունները զինծառայողների հոգեկան և ֆիզիկական վիճակի վրա: Աֆղանստանում և Իրաքում մարտական գործողություններից վերադարձող զինծառայողների մինչև 30%-ը տառապում էր հոգեբանական խնդիրներից: Պատերազմի հետևանքով առաջացած հոգեկան առողջության վրա ծանր ազդեցության ևս մեկ լրացուցիչ ապացույց է՝ ԱՄՆ պաշտպանության նախարարություն կողմից հայտնած տեղեկությունը, որ 2010 թվականին զինված ուժերի բոլոր զորատեսակներում գրանցվել է 281 հաստատված ինքնասպանություն: Դրանցից 147 ինքնասպանության և 413 ինքնասպանության փորձ գրանցվել է ԱՄՆ ցամաքային զորքերում: Ինքնասպանություն գործածների մոտավորապես 62%-ն ունեցել է մարտական փորձ, իսկ ավելի փոքր տոկոսը (14.3%)՝ եղել է անմիջական մարտական գործողություների մասնակից (Robert, et al., 2013):

Իրականացված հետազոտության արդյունքները վկայում են, որ ուսումնասիրված զինծառայողների շրջանում հոգեկան առողջության խնդիրներն ունեն զգալի տարածվածություն: Մասնավորապես, անհանգստության ախտանիշների առնվազն թեթև արտահայտված մակարդակ արձանագրվել է հետազոտվողների շուրջ 68%-ի մոտ, ընկճախտի դրսևորումներ՝ մոտ 27%-ի մոտ, իսկ հետվնասվածքային սթրեսային խանգարմանը համապատասխանող ցուցանիշներ՝ մոտ 12.5%-ի մոտ: Վերլուծությունները ցույց են տվել, որ հոգեկան կայունության պաշտպանիչ գործոնները՝ ստորաբաժանման սոցիալ-հոգեբանական աջակցությունը, ընկերական հարաբերություններից բավարարվածությունը և հոգեկան կայունությունը, ցուցաբերում են վիճակագրորեն նշանակալի պաշտպանիչ ազդեցություն հոգեկան խանգարումների ձևավորման վրա: Հոգեկան կայունությունը հանդես է գալիս որպես առավել ազդեցիկ գործոն՝ պայմանավորելով անհանգստության, ընկճախտի և հետտրավմատիկ սթրեսային խանգարման զարգացման ռիսկի միջինում 11–13%-ով նվազում: Միաժամանակ պարզվել է, որ հոգեկան կայունության պաշտպանիչ ազդեցությունն առավել արտահայտված է մարտական առաջադրանքներին չմասնակցած

զինծառայողների շրջանում, մինչդեռ մյուս պաշտպանիչ գործոնների ազդեցությունը ծառայության կարգավիճակից էականորեն կախված չէ (Hoopsick, et al., 2021):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արտակարգ իրավիճակների պայմաններում մասնագետների հոգեբանական կայունությունը հանդես է գալիս որպես գործունեության արդյունավետության առանցքային գործոն: Այն արտահայտվում է ոչ միայն սթրեսային ազդեցություններին դիմակայելու ունակությամբ, այլև արագ փոփոխվող ու անկանխատեսելի պայմաններում հարմարվելու, օպերատիվ և պատասխանատու որոշումներ կայացնելու, ինչպես նաև թիմային փոխգործակցությունն ու գործառնական համաձայնեցվածությունը պահպանելու կարողությամբ: Հոգեբանական կայունության մակարդակը պայմանավորված է ինչպես անհատական հոգեբանական ռեսուրսներով, այնպես էլ կազմակերպչական և անհրաժեշտ սոցիալ-հոգեբանական միջավայրի հոգատար վերաբերմունքի դրսևորման առանձնահատկություններով:

Հոգեբանական կայունության ձևավորման գործընթացում կարևոր նշանակություն ունեն նպատակային հոգեբանական պատրաստության ծրագրերը, սթրեսադիմացկունության և գործառնական տոկունության զարգացմանն ուղղված մարզումները, ինչպես նաև ղեկավար կազմի կողմից աջակցող և կանխարգելիչ կառավարման մեխանիզմների կիրառումը: Համակարգված և համալիր մոտեցումը հոգեբանական պատրաստվածությանը հնարավորություն է տալիս բարձրացնել արտակարգ իրավիճակներում գործող անձնակազմի արդյունավետությունը և նվազեցնել բարձր սթրեսային գործոնների բացասական հոգեբանական հետևանքները:

Այս համատեքստում հոգեբանական կայունության ապահովումը պետք է դիտարկվի որպես արտակարգ իրավիճակների կառավարման համակարգի ռազմավարական բաղադրիչ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Մկրտումյան Մ.Պ. (2021). *Արտակարգ-ճգնաժամային իրավիճակների հոգեբանություն: Արտակարգ իրավիճակներում անձի հոգեբանական անվտանգության ապահովման հիմնախնդիրներ* [Ուսումնական ձեռնարկ]: Երևան:

Берг Т.Н. (2005). *Нервно–психическая неустойчивость и способы ее выявления.* Владивосток: Мор. гос. ун–т.

Божович, Л.И. (2001). *Проблемы формирования личности: Избранные психологические труды* (3-е изд.). Москва-Воронеж.

Караяни, А.Г., & Сыромятников, И. В. (2006). *Прикладная военная психология*. СПб.: Питер.

Караяни, А.Г., & Сыромятников, И. В. (2016). *Военная психология: учебник для специалистов психологической работы Вооруженных Сил Российской Федерации*. М.: ВУ.

Киселев, А.М. (2023). О формировании стрессоустойчивости в процессе служебной подготовки сотрудников. *Прикладная юридическая психология*, *(3)*64, 132-138.

Кокун, О.М., Клочков, В. В., Мороз, В. М., Пішко, І. О., & Лозінська, Н. С. (2022). *Забезпечення психологічної стійкості військовослужбовців в умовах бойових дій* [Метод. посіб.]. Київ-Одеса: Фенікс.

Коупленд, Н. (1991). *Психология и солдат* (2-е изд.). М.

Леонтьев, Д.А., & Рассказова, Е.И. (2011). *Жизнестойкость как составляющая личностного потенциала*. В кн.: *Личностный потенциал: структура и диагностика* (сс. 560). М.: Смысл.

Hoge, C.W., Castro, C.A., Messer, S.C., McGurk, D., Cotting, D.I., & Koffman, R.L. (2004). Combat duty in Iraq and Afghanistan, mental health problems, and barriers to care. *New England Journal of Medicine*, *351*(1), 13–22. https://doi.org/10.1056/NEJMoa040603

Hoopsick, R.A., Homish, D.L., Collins, R.L., Nochajski, T.H., Read, J.P., Bartone, P.T., & Homish, G.G. (2021). Resilience to mental health problems and the role of deployment status among U.S. Army Reserve and National Guard soldiers. *Social Psychiatry and Psychiatric Epidemiology*, *56*(7), 1299–1310. https://doi.org/10.1007/s00127-020-01899-5

Sinclair, R.R., & Britt, T.W. (Eds.). (2013). *Building psychological resilience in military personnel: Theory and practice*. American Psychological Association.

REFERENCE LIST

Mkrtumyan M. P. (2021). Psihologiya chrezvychajno-krizisnyh situacij: problemy obespecheniya psihologicheskoj bezopasnosti lichnosti v chrezvychajnyh situaciyah (Psychology of emergency situations: problems of ensuring psychological safety of an individual in emergency situations). Erevan.

Berg, T.N. (2005). Nervno-psikhicheskaya neustoychivost' i sposoby ee vyyavleniya *(Neuropsychic instability and methods for its detection)*. Mor. gos. un-t.

Bozhovich, L.I. (2001). Problemy formirovaniya lichnosti: Izbrannye psikhologicheskie trudy (Problems of personality formation: Selected psychological works) (3rd ed.). Moskva-Voronezh.

Karayani, A.G., & Syromyatnikov, I.V. (2006). Prikladnaya voennaya psikhologiya *(Applied military psychology*). Piter.

Karayani, A.G., & Syromyatnikov, I.V. (2016). Voennaya psikhologiya: uchebnik dlya spetsialistov psikhologicheskoy raboty Vooruzhennykh Sil Rossiyskoy Federatsii *(Military psychology: A textbook for psychological work specialists of the Armed Forces of the Russian Federation).* VU.

Kiselev, A.M. (2023). O formirovanii stressoustoychivosti v protsesse sluzhebnoy podgotovki sotrudnikov *(On the formation of stress resistance in the process of official training of employees). Prikladnaya yuridicheskaya psikhologiya [Applied Legal Psychology], 3*(64), 132–138.

Kokun, O.M., Klochkov, V. V., Moroz, V. M., Pishko, I. O., & Lozins'ka, N. S. (2022). Zabezpechennya psihologichnoï stijkosti vijs'kovosluzhbovciv v umovah bojovih dij (Ensuring the psychological resilience of military personnel in combat conditions). [Metod. posib.]. Kiïv-Odesa: Feniks.

Copeland, N. (1991). Psikhologiya i soldat *(Psychology and the soldier)* (2nd ed.). Progress.

Leontiev, D.A., & Rasskazova, E.I. (2011). Zhiznestoykost' kak sostavlyayushchaya lichnostnogo potentsiala *(Resilience as a component of personal potential).* In *Lichnostnyy potentsial: struktura i diagnostika* [Personal potential: Structure and diagnostics] (pp. 120-140). Smysl.

Hoge, C.W., Castro, C.A., Messer, S.C., McGurk, D., Cotting, D.I., & Koffman, R.L. (2004). Combat duty in Iraq and Afghanistan, mental health problems, and barriers to care. *The New England Journal of Medicine, 351*(1), 13–22. https://doi.org/10.1056/NEJMoa040603

Hoopsick, R.A., Homish, D.L., Collins, R.L., Nochajski, T.H., Read, J.P., Bartone, P.T., & Homish, G.G. (2021). Resilience to mental health problems and the role of deployment status among U.S. Army Reserve and National Guard soldiers. *Social Psychiatry and Psychiatric Epidemiology*, *56*(7), 1299–1310. https://doi.org/10.1007/s00127-020-01899-5

Sinclair, R.R., & Britt, T.W. (Eds.). (2013). *Building psychological resilience in military personnel: Theory and practice*. American Psychological Association.

РЕЗЮМЕ

МОТИВЫ ОБЕСПЕЧЕНИЯ ПСИХИЧЕСКОЙ УСТОЙЧИВОСТИ ВОЕННОСЛУЖАЩИХ В ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЯХ

Самвел Парзян

Целью статьи является исследование мотивационных факторов, влияющих на психическую устойчивость военнослужащих, а также выявление и анализ проблем обеспечения психической устойчивости. Необходимость глубокого и всестороннего исследования данной проблемы обусловлена высокой интенсивностью современных войн, разнообразием применяемых вооружений, ограниченностью времени для принятия решений, быстро меняющимся характером событий, а также неопределённостью ситуации, обусловленной так называемым «туманом войны». В этих условиях сохранение психической устойчивости военнослужащих становится важнейшим условием поддержания боеспособности и эффективного выполнения служебно-боевых задач.

Ключевые слова: *психическая устойчивость, военнослужащие, морально-психологическое состояние, чрезвычайная ситуация.*

SUMMARY

MOTIVES FOR ENSURING THE MENTAL RESILIENCE OF MILITARY PERSONNEL IN EMERGENCY SITUATIONS

Samvel Parzyan

The objective of this article is to examine the primary factors influencing the psychological resilience of military personnel, as well as to identify and analyze the challenges associated with ensuring such resilience. The necessity for in-depth and comprehensive research is driven by the intensity of modern warfare, the diversity of weaponry employed, limited decision-making timeframes, rapidly evolving events, and the uncertainties inherent in the "fog of war." In these environments, maintaining the psychological resilience of military personnel becomes a critical prerequisite for combat readiness and operational effectiveness.

Keywords: *psychological resilience, military personnel, morale and psychological state, emergency situation.*

Հոդվածը ստացվել է՝ 15.01. 2026

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 20.01. 2026

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 02.03.2026